նին նախորդում է Առաջավորաց պասը, որը ժողովրդի մեջ հաճախ կոչվում է խաշիլի պաս։ Ս. Սարգիսը ներկայացվում էր որպես արագաթռիչ ձիավոր, որն ըստ մի քանի գյուղերում կրկնվող պատմության ուռումնէրի՝ հույների աշխարհից, արևմուտքից կին է փախցրել։ Նրան վերագրված հատկանիշներից կարելի է եզրակացնել, որ դա քամիների հեթանոսական աստվածություն էր՝ քրիստոնեական կերպարանք ստացած[21]։ Նա փոշի, բուք ու բորան բարձրացնող կամ դադարեցնող զորությամբ էր օժտված, բարյացակամ էր վերաբերվում իրեն հարգողներին և ընդհակառակը՝ վրեժխնդիր լինում որևէ կերպով իր սիրտը չշահողների հանդեպ։ Նրան ձոնված էր հատուկ օր փետրվարի վերջերին կամ գիժ մարտի սկզբներին[22]։ Ուրբաթ երեկոյան տանտիկինը պատրաստում էր փօխինձ՝ աղանձած ցորենի ալյուր և փօխինձի մի մասը մեղրի կամ շաքարի ջրով, վերջին ժամանակներս դօշաբավ շաղախված՝ պատրաստում էր պուտէր՝ փոքրիկ գնդիկներ, որ արևի մայր մտնելուց հետո բաժանում էր տանեցոց մեջ—փոքրերին և մեծերին, իսկ մի այլ մասը մաղով մաղում էր մի մէծ մէժմäնու վրա, կողքին դնում էր ձեթի ճռաֆ-ճալբաֆի՝ պնակ իր պատրիկավ՝ պատրույկով և զետեղում էր կամ տան մղակում՝ շեմքին կամ շեմքի դիմաց մի ֆöնչում՝ անկյունում փըռսիվէր՝ ոտքը վեր, երեսը վար կաթսայի վրա։ Առավոտյան ստուգում էին՝ արդյոք սուրբ Սարգիսն այցելե՞լ է այդ տունը և նրա ձիու պայտի հետքն արդյոք դրոշմվա՞ծ է այդ փօխինձի, այդ փոշու վրա։ Եթե այցելել է, ընդհանուր ուրախություն էր տիրում, ուրեմն նա համոզվել է, որ այդ տան մեջ իրեն հարգում են, և այնուհետև փոթորիկների ժամանակ նրանց պահապան կկանգնի. մանավանդ ճամփորդության ամեն փորձության միջոցին։ Հաջորդ օրն այդ փոխինձից եփվում էր խաշիլ և կöվաքնէրի մեջ բաժանվում տանեցիներին։ Սա էլ մի տեսակ մատաղ էր, որը նույնպես նվիրված էր սուրբին և ուտվում էր իբր թե ինքը սուրբն է ուտում։ Խաշիլը Զանգեզուրումն էլ, ինչպես Լեռնային Ղարաբաղում, լցվում էր կöվաքնէրի մեջ շատ հատկանշական ձևով, որը հիշեցնում է արևի սկավառակը։ Նախ ածում են հարած չորթանը, ապա նրա վրա խաշիլն են ֆըցըմ՝ գցում, մեջտեղ չըխուռ՝ փոս են անում և յուղ ածում։ Մի ուրիշ ամանով կողքին դնում են թան. այդ թանից ուտողը ավելացնում է ուզած ժամանակ։

Թեև ուրիշ օրեր էլ այդ կերակուրը եփում էին[23], սակայն այդ չէր ունենում այն անհրաժեշտ մոգական հանդիսավորությունը, որը տրվում էր նրան ս. Սարգսի տոնին։

Այդ օրն աղջիկները կատարում էին գուշակություն, թե ո՞ւմ հետ է վիճակված իրենց ամուսնանալը։ Աղջիկներն ամբողջ ս. Սարգսի պասն անց էին կացնում միաժում, այսինքն՝ օրական մի անգամ ուտելով, այն էլ արևի մայր մտնելուց հետո։ Ուրբաթ օրը թխում էին աղի բաղարջ մի մննաճօց՝ մատնոց ալյուրի վրա ածում էին մի մըննաճօց աղ, խմոր անում, թխում և պառկելուց առաջ ուտում՝ երազում ջուր տեսնելու համար։ Ով որ երազում ծարաված աղջկան ջուր պարզեր՝ նա էր լինելու աղջկա ղըմաքը՝ բախտից նշանակված ապագա ամուսինը։

---

[21] Հմմտ. *M. Abegian*, Der armenische Volksglaube, էջ 95։

[22] Զանգեզուրում շատ աղոտ կերպով է պահպանված այն պատմությունը, թե ըժգոհ սուրբ Սարգիսը փոթորկով ու ձյունով է պատժում իրեն չպատվող, չշահասիրող անձին՝ նրա հարսանիքի օրը։

[23] Ալաշկերտում եփում էին նաև տօլի, Զանգեզուրում՝ դօլ, այսինքն՝ ոչխարի ծնից անմիջապես հետո առաջին կաթը՝ դալը, խէժը, խիժը։